ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

07.02.2024թ.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀՀ Տավուշի մարզի խորհրդի նիստի

7.02.2024թ.

1. Օրակարգի հաստատում:

2.2023 թվականի սուբվենցիոն ծրագրերի իրականացման և 2024 թվականին նախատեսվող ծրագրերի մասին:

Զեկուցող՝ Գ.Հարությունյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ

3.ՀՀ Տավուշի մարզի համայնքների 2023թ. սեփական եկամուտների կատարողականների մասին:

Զեկուցող՝ Ա.Բաբլումյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

4.<<300 մանկապարտեզ և 500 դպրոց>> ծրագրի շրջանակներում ՀՀ Տավուշի մարզում իրականացվող ծրագրերի մասին:

Զեկուցող՝ Մ. Մելքումյան – ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ

5. 2023 թվականի ձմեռային զորակոչի արդյունքները:

Զեկուցող՝ Գ. Մատինյան – ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ

6. Այլ հարցեր

Ներկա էին ՀՀ Տավուշի մարզի խորհրդի բոլոր անդամները:

Մասնակցում էին մարզպետի տեղակալները, մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարը, մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները:

1. Հաստատվեց օրակարգը:

2. ՀՀ Տավուշի մարզի 2023 թվականների սուբվենցիոն ծրագրերի իրականացման և 2024 թվականին նախատեսվող ծրագրերի հայտերի ընթացքի մասին: Զեկուցեց՝ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Գուրգեն Հարությունյանը:

-2023թ. միջգերատեսչական հանձնաժողովի հաստատած 15 ծրագիր և 1 ծրագիր՝ 2022թ-ից տեղափոխված 4,2 միլիարդ դրամ ընդհանուր արժեքով համայնքների կողմից դրվել է մրցույթի:

Նշված ծրագրերից 13-ն ավարտվել են, իսկ 3 ծրագիր ավարտվել են մասսամբ, որոնց մի մասը տեղափոխվել է 2024 թվական:

Դրանք են.Դիլիջանի Խաչարձան գյուղի տուֆապատման, Թեղուտի ջրամատակարարման, և Իջևանի մի շարք փողոցների ասֆալտապատման աշխատանքները:

2024 թվական է տեղափոխվել նաև 2022թ. հաստատված Դիլիջանի մշակույթի պալատի հիմնանորոգման և 2021 թվականին հաստատված Դիլիջանի 5 ԲԲՇ-ների էներգոարդյունավետ արդիականացման ծրագրերի շինարարական աշխատանքները:

2023 թվականին փաստացի իրականացվել են 4.099 մլրդ.դրամի սուբվենցիոն ծրագրեր, որոնց մի մասը 2022 թվականից տեղափոխված ծրագրեր են:

Տարվա ընթացքում պարբերաբար, ինչպես ՀՀ ՏԿԵՆ-ի մասնագետների հետ համատեղ, այնպես էլ մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից, իրականացվել են ծրագրերի մշտադիտարկման աշխատանքներ, որոնց արդյունքների վերաբերյալ կազմվել են համապատասխան տեղեկանքներ:

Մոնիտորինգի արդյունքում հայտնաբերվել են որոշ թերություններ, որոնք ենթակա են անհապաղ վերացման:

2024թ. Տավուշի մարզի համայնքներից մարզպետի աշխատակազմ է ներկայացվել թվով 27 սուբվենցիոն հայտ, որոնք արժանացել են միջգերատեսչական հանձնաժողովի հավանությանը:

Նշված ծրագրերից թվով 20-ը համայնքների կողմից կատարված որոշակի փոփոխություններից և լրամշակումներից հետո ամբողջական փաթեթներով մոտ 6.4 մլրդ.դրամ ընդհանուր արժեքով ներկայացվել են ՀՀ ՏԿԵՆ/2.3 մլրդ.դրամ համայնք, 4.04 մլրդ.դրամ ՀՀ կառավարություն, 29.2 մլն այլ ներդրողներ/:

Ներկայումս ամբողջական փաթեթների վերաբերյալ դիտողությունները սահմանված ձևաչափով վերադարձվում են համայնքային պատասխանատուներին, մեկ-երկու օրվա ընթացքում շտկելու և վերադարձնելու հաստատման:

Հարկ է նշել, որ ամբողջական փաթեթները հաճախ մարզպետի աշխատակազմ են ներկայացվում ժամկետների ուշացումներով և ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման հավելվածով սահմանված կարգին անհամապատասխան:

Ավարտելով խոսքս, առաջարկում եմ պլանավորվող ծրագրերի վերաբերյալ նախապես կազմել անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթներ, հետևելով համապատասխան որոշման պահանջներին և ժամկետներին:

Բոլոր ծրագրերը մեկ-առ մեկ վերլուծվեցին, քննարկվեցին դրանց ավարտման հետ կապված հարցերը, ֆինանսավորման փուլերը, ինչպես նաև նախատեսված սուբվենցիոն ծրագրերի ներկայացման ժամկետները:

Սուբվենցիոն ծրագրերի իրականացման հետ կապված, մարզպետ Հայկ Ղալումյանը համայնքների ղեկավարների ուշադրությունը հրավիրեց սուբվենցիոն ծրագրերի իրականացման որակի վրա, հանձնարարեց ստորաբաժանումների ղեկավարներին՝

- Աշխատանքների համար պահանջվող որակն ապահովելու նպատակով, խստացնել կատարվող մոնիտորիգները՝ դրանցում անպայման ներգրավելով համայնքների ներկայացուցիչներին: Արդյունավետությունը բարձրացնելու նպատակով պետք է համատեղ աշխատել և ավելի հաճախ այցելել շինհրապարակներ:

-Ուշադրություն դարձնել նաև սուբվենցիոն ծրագրերի փաթեթների կազմման որակի վրա՝ դրանք կազմել սահմանված կարգին համապատասխան:

Հետևել, որպեսզի շինարարություն իրականացնող կազմակերպությունների աշխատակիցները շինհրապարակներում լինեն համապատասխան արտահագուստով:

3. ՀՀ Տավուշի մարզի համայնքների 2023թ. սեփական եկամուտների կատարողականների մասին: Զեկուցեց ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Ասքանազ Բաբլումյանը:

Մարզի համայնքների 2023թ. տեղական բյուջեների տարեկան նախատեսված եկամուտների հանրագումարը կազմել է 9 մլրդ 424 մլն 294 հազ դրամ, որից սեփական եկամուտները՝ 2 մլրդ 82 մլն 524 հազ դրամ, կամ ընդհանուր գումարի 22,1 %-ը, ՀՀ պետական բյուջեից տրամադրվող պաշտոնական դրամաշնորհները կազմել են 7 մլրդ 341 մլն 770 հազ դրամ (77,9 %), այդ թվում դոտացիան՝ 3 մլրդ 737 մլն 608 հազ դրամ (39,7 %), սուբվենցիան՝ 3 մլրդ 16 մլն 210 հազ դրամ (32,0 %), այլ տրանսֆերտներ՝ 588 մլն 677 հազ դրամ (6,2 %):

2023 թվականին ՀՀ պետական բյուջեից սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորումը կազմել է 2 մլրդ 681 մլն 620 հազ դրամ:

2023 թվականին մարզի համայնքների եկամուտների փաստացի մուտքը կազմել է 8 մլրդ 785 մլն 729 հազ դրամ, կամ կատարվել է 93,2 %-ով, իսկ սեփական եկամուտների կատարողականը կազմել է 100.8 % կամ հավաքագրվել է 2 մլրդ 82 մլն 524 հազ դրամ:

Ըստ առանձին եկամտատեսակների սեփական եկամուտների տարեկան կատարողականներն ունեն հետևյալ տեսքը.

- անշարժ գույքի հարկ – տարեկան ծրագրով նախատեսվել է 335,9 մլն դրամ, որի դիմաց հավաքագրվել է 303,1 մլն դրամ, կամ կատարվել է 90,2 %-ով,

- գույքահարկ փոխադրամիջոցների համար - տարեկան ծրագրով նախատեսվել է 724.9մլն դրամ, որի դիմաց հավաքագրվել է 769,9 մլն դրամ, կամ կատարվել է 106,2 %-ով,

- տեղական տուրքեր – տարեկան ծրագրով նախատեսվել է 69,8 մլն դրամ, որի դիմաց հավաքագրվել է 79,2 մլն դրամ, կամ կատարվել է 113,5 %-ով,

- գույքի վարձակալությունից եկամուտներ – տարեկան ծրագրով նախատեսվել է 129,9 մլն դրամ, որի դիմաց հավաքագրվել է 124,2 մլն դրամ, կամ կատարվել է 95.5 %-ով,

- տեղական վճարներ– տարեկան ծրագրով նախատեսվել է 420,0 մլն դրամ, որի դիմաց հավաքագրվել է 372,7 մլն դրամ, կամ կատարվել է 88.7 %-ով:

Սեփական եկամուտների եկամտատեսակների մեջ ամենացածր կատարողականն ունեն անշարժ գույքի հարկերը-90,2% և տեղական վճարները-88,7 %:

Մարզի համայնքների 2024 թվականի տեղական բյուջեների հանրագումարը կազմում է 7 մլրդ 418 մլն 522 հազ դրամ, որից սեփական եկամուտները՝ 2 մլրդ 125 մլն 502 հազ դրամ, որը ավել է 2023 թվականի տեղական բյուջեով նախատեսված սեփական եկամուտներից 42.9 մլն դրամով կամ 2023թվականի նկատմամբ աճը կազմել է 2.0 %: 2024 թվականի սեփական եկամուտների մեջ հիմնական տարբերությունը կազմում են այլ եկամուտների մասով

Մարզի համայնքների 2024 թվականի տեղական բյուջեներով հաստատված անշարժ գույքի և փոխադրամիջոցների տարեկան գումարների և միասնական տեղեկատվական համակարգի տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարզի կտրվածքով 2024 թվականի անշարժ գույքի տարեկան հարկը տեղեկատվական համակարգի տվյալներից ավել է նախատեսվել 41.1 մլն դրամով, իսկ փոխադրամիջոցները պակաս են նախատեսվել 41 մլն դրամով:

Տեղեկատվական համակարգի ապառքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի համայնքներում առկա են մոտ 1 մլրդ դրամի ապառքներ, այդ թվում՝ հողի հարկի մասով 577 մլն դրամ, շենքեր և շինությունների գույքահարկի մասով՝ 58 մլն դրամ և փոխադրամիջոցների գույքահարկի մասով՝ 384 մլն դրամ:

Համայնքների ղեկավարների ուշադրությունն ենք հրավիրում փոխադրամիջոցների գույքահարկի մասով առաջացած ապառքների վրա (առավելապես խոշոր՝ 300.0 հազար դրամից ավել) և առաջարկում ուսումնասիրել առաջացած ապառքների կառուցվածքը և դրանց հնարավորինս գանձման տարբերակները:

ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմը պատրաստ է մարզի համայնքներին ցուցաբերել մեթոդական և խորհրդատվական օգնություն ինչպես տեղական բյուջեների նախագծերի կազմման, այնպես էլ եկամուտների հավաքագրման գործընթացներում:

Մարզպետ Հայկ Ղալումյանը համայնքապետերի ուշադրությունը հրավիրեց հնարավորինս իրատեսական բյուջե կազմելու խնդրի վրա: Հանձնարարեց Մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին քննարկումներ կազմակերպել համայնքապետարանների ֆինանսական բաժինների աշխատակիցների և մյուս մասնակից մասնագետների հետ և համատեղ աշխատել բյուջեների ճիշտ կազմման վրա: Եթե բյուջեն իրատեսական լինի, ապա հավաքագրումն էլ՝ հեշտ կլինի,-նշեց Մարզպետը:

4. <<300 մանկապարտեզ և 500 դպրոց>> ծրագրի շրջանակներում ՀՀ Տավուշի մարզում իրականացվող ծրագրերի մասին: Զեկուցեց ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Միսակ Մելքումյանը:

-Արդեն մոտ 4 տարի է, ինչ մարզում մեկնարկել է ,,300 դպրոց և 500 մանկապարտեզ կառուցելու, վերանորոգելու կամ հիմնանորոգելու,, ծրագիրը:

Ներկայումս մարզի 4 բնակավայրում ընթանում են՝ 3 դպրոցի և 1 մանկապարտեզի կառուցման շինարարական աշխատանքները: Գանձաքար, Կիրանց, Դովեղ համայնքներում մեկնարկել է նոր դպրոցների շինարարությունը, իսկ Բագրատաշեն գյուղում՝ նոր մանկապարտեզի կառուցման աշխատանքները:

Գանձաքարի 480 աշակերտաքանակով դպրոցի կառուցումը իրականացվում է ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 1,8 մրդ .ՀՀ դրամ. արժողությամբ ,,Սեյսմիկ բարելավման ծրագրի,, շրջանակում ,,Ասիական զարգացման բանկի,, 82% և ՀՀ Կառավարության 18% ֆինանսավորմամբ: Ըստ կապալառու կազմակերպության հայտարարության դպրոցաշենքը կհանձնվի շահագործման 2024 թվականի հուլիս ամսին:

Հունիս ամսին Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից կկատարվեն դպրոցին մոտեցնող ճանապարհատվածի ասֆալտապատման աշխատանքները:

Մարզպետի աշխատակազմի այցելության ժամանակ շինհրապարակում արտառոց բացթողումներ չեն հայտնաբերվել:

Կիրանցի 100 աշակերտաքանակով մոդուլային դպրոցի կառուցումը իրականցվում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 680 մլն ՀՀ դրամ արժողությամբ 100 % ՀՀ ՊԲ ֆինանսավորմամբ: Ըստ կապալառու

կազմակերպության հայտարարության, դպրոցը կհանձնվի շահագործման 2024 հունիս ամսին:

Մարզպետի աշխատակազմի այցելության ժամանակ պարզվեց, որ լաբորատոր դասասենյակում նախատեսված ծորակների քանակը չի համապատասխանում դասասենյակի աշակերտաքանակին: Դպրոցի տնօրենն անհանգստություն հայտնեց լիարժեք դասապրոցեսը կազմակերպելու համար փաստացի երկու դասասենյակի պակասության մասին, որի հնարավոր լուծումը առաջարկվեց երկու դասասենյակը ,,լրացնել,, երկրորդ հարկի գրադարանի երկու ազատ ռեկրիացիոն գրպանիկների հաշվին՝ ապակեպատ պատնեշների կառուցմամբ:

Լրացուցիչ տեղեկացնում եմ, որ Կիրանցի մոդուլային դպրոցի տանիքային մասում առկա են բավականին մեծ չափերի և ծավալի տարածքներ, որոնք բնական լուսավորություն ապահովելու դեպքում, արդյունավետ կլիներ օգտագործել դպրոցի կարիքների համար:

Դովեղի 100 աշակերտաքանակով մոդուլային դպրոցի կառուցումը իրականացվում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 782 մլն / առանց հենապատի արժեքի/ ՀՀ դրամ արժողությամբ 100 % ՀՀ ՊԲ ֆինանսավորմամբ:

Մարզպետի աշխատակազմի այցելության օրը պարզվեց, որ դպրոցի տարածքին կից կառուցվող հենապատի հողային աշխատանքների իրականացման հետևանքով վտանգվել է գյուղ տանող ճանապարհատվածը: Մեր կողմից գրավոր իրազեկվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը՝ հարցին հրատապ լուծում տալու խնդրանքով:

Լրացուցիչ հայտնում եմ որ դպրոցաշենքի շինարարական տեմպերը չեն համապատասխանում նախագծով նախատեսած ժամկետներին եւ ծավալներին:

Նախագծային ավարտուն փուլում է գտնվում Նավուրի մոդուլային դպրոցը, որի շինմեկնարկը կտրվի 2024 թվականի հունվարին, սակայն տեղակապման հետ խնդիր ունենք: Նախապես համաձայնեցված էր դպրոցի ազատ հողամասում մոդուլային դպրոցը կառուցելու ծրագիրը եւ մնացած մասնաշենքերը համայնքին հանձնելու պայմանավորվածությունը, սակայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ընտրվել է մասնաշենքերը քանդելու տարբերակը, որը խիստ կդժվարացնի երեխաների դասապրոցեսի կազմակերպումը շինարարական աշխատանքների տարիներին:

Գոշի մոդուլային դպրոցի կառուցման գործընթացը կանգնած է, քանի որ նախատեսված տիպային մոդուլային դպրոցաշենքի նախագիծը չի տեղավորվում առկա հողատարածքի ուրվագծում, իսկ անհատական նախագծի անհրաժեշտության մասին դեռ մեկ տարի առաջ գրավոր տեղեկացվել է քաղաքաշինության կոմիտեն:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2025 թվականին իրագործել մարզում ևս 8 նոր դպրոցի և 5 կրթահամալիրի կառուցում: Հաստատված են՝ *Այրումի, Կոթիի, Այգեձորի, Նոյեմբերյանի, Սևքարի, Կողբի թիվ1, Արծվաբերդի թիվ 1, Բագրատաշենի թիվ 1 նոր դպրոցաշենքերի կառուցում* և *Լուսաձորի, Պտղավան, Աղավնավանքի, Նորաշենի , Ոսկևանի կրթահամալիրների կառուցման* աշխատանքները:

Խիստ անհրաժեշտ եմ համարում, որպեսզի բոլոր նոր դպրոցների տեղակապման աշխատանքները կատարվեն մարզպետի աշխատակազմի և դպրոցի համաձայնության պարագայում:

Այսպիսով, մարզը կհամալրվի 16 նոր դպրոցով և 1 նոր մանկապարտեզով: Լրացուցիչ տեղեկացնեմ, որ այս 4 տարվա ընթացքում կատարվել են բազմաթիվ հիմնանորոգման աշխատանքներ թե դպրոցաշենքերում, թե մանկապարտեզներում:

Մարզպետն առաջարկեց համայնքների ղեկավարներին, իսկ Մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներին հանձնարարեց.

-Կազմակերպել քանդման ենթակա դպրոցների աշակերտներին տեղավորելու հարցերն այնպես, որ չտուժի նրանց ուսումնական գործընթացը:

-Եթե դպրոց տանող ճանապարհների հիմնանորոգման ծրագրեր կան, ապա դրանց իրականացման ժամկետը նախատեսել դպրոցի կառուցումից հետո:

5. ՀՀ Տավուշի մարզում 2023 թվականի ձմեռային զորակոչի արդյունքների և անցկացվելիք վարժական հավաքների նախապատրաստական աշխատանքների մասին: Զեկուցող՝ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Գագիկ Մատինյան:

-Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 25-րդ հոդվածի 1-ին մասերով և «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ձմեռային զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» թիվ 1835-Ն, ՀՀ Տավուշի մարզպետի 2023 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2023 թվականի ձմեռային զորակոչ կազմակերպելու մասին» թիվ 313-Ա որոշումների պահանջների՝

- հանձնարարվել է ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ 2023 թվականի ձմեռային զորակոչը անցկացնել սահմանված կարգով,
- հանձնարարվել է մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի պահանջներով, իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ,
- առաջարկվել է համայնքների ղեկավարներին՝ իրավասության սահմաններում ապահովել ձմեռային զորակոչի կազմակերպումը,
- հանձնարարականներ են տրվել և առաջարկվել հիմնարկ-ձեռնարկությունների ու կազմակերպությունների ղեկավարներին՝ ձմեռային զորակոչին սահմանված կարգով աջակցություն ցուցաբերելու:

2023 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում հրավիրված մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերի ընթացքում քննարկվել են զորակոչին առնչվող, 2023 թվականի ձմեռային զորակոչի ընթացքի և խնդիրների մասին, տարկետման ներկայացված անձնական գործերի, ժամկետային զինծառայությունից խուսափող պատանիների վերաբերյալ հարցեր: Նիստերում նշվել է զորակոչի՝ որպես պետական կարևորագույն միջոցառման նշանակությունը: Ուստի կազմակերպություններն ու ուսումնական հաստատությունները, որոնք առնչվում են նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների դաստիարակման և ուսուցման խնդիրներին, ուշադրության կենտրոնում պետք է պահեն նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների դաստիարակման և ուսուցման խնդիրները, պետք է ամենօրյա հետևողականություն ցուցաբերեն զորակոչին առնչվող

միջոցառումները ժամանակին և սահմանված կարգով իրականացնելուն: Այստեղ կարևորվում է հատկապես համայնքների դերը:

Առաջարկվել է համայնքների ղեկավարներին կցագրման միջոցառումներն իրականացնել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներին համապատասխան:

2023 թվականի դեկտեմբեր-հունվար ամսին Տավուշի մարզի թիվ 1 և թիվ 2 տարածքային ստորաբաժանումներում կազմակերպվել և անց է կացվել 2023 թվականի ձմեռային զորակոչը:

1. ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի թիվ 1 տարածքային ստորաբաժանում.

Զորակոչին ենթակա են եղել 450 զորակոչիկ, ներկայացել են 443-ը, որոնցից 2005 թվականի ծնվածներ՝ 310 զորակոչիկ, բուժվերազննման ենթականեր՝ 133, ավագ տարիք՝ 16:այլ կատեգորիաներ՝ 7:

1. Պլան-առաջադրանքը ներկայացվել է 160 զորակոչիկ, զորակոչվել են 163-ը:

2. Տրվել է տարկետում 43 զորակոչիկի, որոնցից՝

Ուսման պատճառով - 35

«Պատիվ ունեմ» ծրագրով – 2

Կառավարության որոշումով - 6

3. Առողջական պատճառով տարկետում ստացել են 131, որից՝

Բուժում 6 ամիս ժամանակով – 3

Բուժում մինչև 1 տարի - 89

3 տարի ժամանակով – 39

4. Ազատվել են զինվորական ծառայությունից և փոխանցվել պահեստազոր 97 զինակոչիկ, որոնցից՝

Առողջական պատճառով - 96

Ընտանեկան պատճառով – 1 /զոհվածի միակ արու զավակ/

5. Խուսափել են 2023 թվականի ձմեռային զորակոչից 7 զինակոչիկ, որոնցից 4-ը գտնվել են ՀՀ-ում, համաձայն չեն եղել կայացված բժշկական որոշման հետ:

2. ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի թիվ 2 տարածքային ստորաբաժանում.

Զորակոչին ենթակա են եղել 124 զորակոչիկ, ներկայացել են 123-ը:

2023 թվականի ձմեռային զորակոչին զորակոչի բժշկական հանձնաժողովին չի ներկայացել 1 զորակոչիկ, որի վերաբերյալ նյութերն ուղարկվել է ՀՀ ՔԿ ԶՔԳՎ վեցերորդ կայազորային քննչական բաժին՝ զորակոչից խուսափելու համար քրեական գործ հարուցելու:

1. Պլան-առաջադրանք է եղել 40 զորակոչիկ, զորակոչվել են ՀՀ ԶՈՒ 44-ը:

2. Տրվել է տարկետում 53 զորակոչիկի, որոնցից՝

Ուսման պատճառով – 12

Կառավարության որոշմամբ - 2

Բուժման նպատակով՝

10 ամիս ժամանակով - 30

3 տարի ժամանակով – 9

3. «ԶԾ և ԶԿՄ» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 23-րդ հոդվածի 2-րդ և 23-րդ հոդվածի 3-րդ կետերով փոխանցվել է պահեստազոր 26 զորակոչիկների անձնական գործեր:

4. 2023 թվականի ձմեռային զորակոչին 1 տարի ժամանակով տարկետում ստացած 26 զորակոչիկներից զորակոչվել են 4-ը, 15-ը ստացել են տարկետում 10 ամիս ժամանակով, 4-ը՝ 3 տարի ժամանակով, 3-ը ճանաչվել են ոչ պիտանի զինվորական ծառայության համար և փոխանցվել պահեստազոր:

5. 2021 թվականի ձմեռային զորակոչին 3 տարի ժամանակով տարկետում ստացած 16 զորակոչիկներից զորակոչվել են 2-ը, 14-ը համաձայն «ԶԾ և ԶԿՄ» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ կետով և 21-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով հաշվառվել են պահեստազոր:

6. 2023 թվականի ամառային զորակոչին հետազոտման մեջ մնացած 1 զորակոչիկ զորակոչվել է ՀՀ ԶՈՒ:

7. 2022 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում հաշվառումից դուրս մնացած զորակոչիկներ չեն ներկայացել:

8. 2023 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում ԲՈՀՀ-ից հեռացված զորակոչիկներ չեն եղել:

9. 2023 թվականի ձմեռային զորակոչին քննչական մարմիններից նախկին զորակոչից խուսափած քաղաքացիներից ներկայացել է 1-ը, որը զորակոչվել է զինվորական ծառայության:

Վերջին 1 տարվա ընթացքում ՀՀ ՊՆ «Պաշտպան հայրենյաց» ծրագրով դիմել են թիվ 1 տարածքային ստորաբաժանումից 43 և թիվ 2 տարածքային ստորաբաժանումից՝ 74 զորակոչիկ /միայն 2023 թվականի ձմեռային զորակոչին /2024 թվականի հունվարի 11-ին/ 20 զորակոչիկներից դիմել են ծառայության 14 զորակոչիկ/:

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ և «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հայտարարվել է պահեստազորի առաջին խմբի առաջին և երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ՝ 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև հուլիսի 15-ը ներառյալ:

Սահմանվել է, որ վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորայինների ռազմական ունակությունների կատարելագործման, մասնագիտական վերապատրաստման և պատրաստման, բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպաների պատրաստման, մարտական հերթապահության ներգրավման նպատակով: Հայտարարված վարժական հավաքների ընթացքում յուրաքանչյուր քաղաքացի ներգրավվում է ոչ ավելի, քան 25 օրացուցային օր ժամկետով:

Վարժական հավաքների ապահովման համար, 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև հուլիսի 15-ը ներառյալ, ռազմատրանսպորտային պարտականություններ ունեցող մարմիններից ներգրավվելու են տրանսպորտային միջոցներ՝ յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի ներգրավումը ոչ ավելի, քան 7 օրացույցային օր ժամկետով:

ՊՆ ղեկավարությունը, ձեռնարկելով համապատասխան միջոցառումներ, իրականացնում է երկրի պաշտպանությունը, սակայն խիստ անհրաժեշտ է հատկապես սահմանամերձ բնակչության զգոնությունը: ՀՀ սահմանների պաշտպանությունը բոլորիս սրբազան գործն է: Ուստի բոլոր պատասխանատուների համատեղ գործունեությամբ է պայմանավորված զորակոչի ու զորահավաքի կազմակերպված իրականացումը, հատկապես կարևորվում է տեղական ինքնակառավարման մարմինների, ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի տարածքային ստորաբաժանումների և բնակչության կապը:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջները սահմանված կարգով կատարելու նպատակով առաջարկվում է համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին կրկին անգամ վերանայել զորահավաքային պլանները, փոխհամաձայնության պլաններն ու զորահավաքին անհրաժեշտ մյուս փաստաթղթերը, թարմացնել ծանուցման տեղամասերում ընդգրկված ծանուցողների ցանկը, անհրաժեշտության դեպքում դրանց փոխարինել նոր, ավելի պատասխանատու մարդկանցով: Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումները և կազմակերպությունները պետք է ամենօրյա աշխատանք տանեն զինապարտների հետ, պարբերաբար շտկեն կցագրման ցուցակները:

Համայնքների ղեկավարներին՝ զորահավաքը պատշաճ մակարդակով անցկացնելու նպատակով առաջարկվում է.

- **Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել բացառապես «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներով:**
- **Սահմանված կարգով, 3 ամիսը մեկ անգամ համապատասխան զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների և տարածքում տեղակայված զորամասերի հետ ճշտել կցագրման ռեսուրսները: Զինապարտի բացակայության դեպքում անհապաղ տեղեկացնել զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին:**
- **Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի պլանները մշակելիս նկատի ունենալ մարզի առանձնահատկությունները և ռեսուրսների համալրման իրատեսական ժամանակացույցը:**

- Պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել մարզպետին համայնքներում ու կազմակերպություններում զորահավաքային նախապատրաստության վերաբերյալ:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ